

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի անունով յիսուն հազար (50,000) ռուբլու վարկ բանալ՝ Բագուից ալիւր և ցորեն գնելու համար։ 1 Դեկտեմբերի. թ. 2158։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Ս. Էջմիածնի Սինոդին Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցաւ բժ. Թախթաջեանի ներկայացրած տասն (10) ռուբլին՝ այցելութիւնից ստացած, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 Դեկտեմբերի, թ. 2161։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից հայ ազատագրութեան Նպաստիչ Ցանձնախմբի փոխադրած երկու հազար ութ հարիւր ութսուն վեց ռուբլի 80 կ. (2836 ռուբ. 80 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ ազատագրու-

թեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2166։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Վոթերթաուն քաղաքի Հայոց Ազգ. Հոգաբարձութեան չորս հարիւր երեք (403) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2167։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Զբլսիի (Ամերիկա) Հանգանակիչ Յանձնաժողովի փոխադրած վեց հարիւր քառասուն եօթ (647) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2168։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Սան-Ֆրանչեսկոյի «Մասիս» Դերասանական խմբի փոխադրած չորս հարիւր իններսուն եօթ ռուբ. 22 կ.(497 ռ. 22 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2169։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Զոմագլուի (Ամերիկա) Յանձնախմբի փոխադրած մի հազար ինն հարիւր եօթանասուն եօթ ռուբ. 80 կոպ. (1977ռ. 80 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2170։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ֆրանքլինի (Ամերիկա) Հայ Տիկնանց Որբախնամ Ընկերութեան փոխադրած երեք հարիւր վաթսուն չորս ռուբ. 864կ. (364 ռ. 864կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2171։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոգին Օմահայի (Ամերիկա) Մասնաւոր Ցանձնախմբի փոխադրած չորս հարիւր երեսուն ութ ռուբ. 50 կ. (438 ռ. 50 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2172։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Լոնդոնից փոխադրած եօթանասուն երկու հազար մի հարիւր քսան և հինգ (72,125) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2173։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Եւպատորիայի Հայոց Ցանձնախմբի փոխադրած ինն հարիւր ռուբ. 87 կ. (900 ռ. 87 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և որբերի և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2174։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Արմաւիրի Գէորգ քահանայ Սեֆերեանի միջոցաւ փոխադրած ութսուն երկու ռուբ. 20 կ. (82 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Դեկտեմբերի, թ. 2175։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոգին տալ Դպրոցական դրամագլխի տոկոսներից Օնի գիւղի (Վրաստանի թեմ) ծխական դպրոցին տարեկան երկու հարիւր (200) ռուբլի նպաստ։ 5 Դեկտեմբերի, թ. 2184։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովին փոխադրել Իգդիրի Եղբայրական Օգնութեան անունով մի հազար (1000) ռուբլի և միջնորդութիւն յարուցանել ուր պէտք է, ստանալու գաղթական որբերի համար որոշուած ամսական նպաստը 15 ռ. և սկզբնական ծախք իւրաքան-

չիւբ որբի համար 20-ական ռուբլի։ 5 Դեկտեմբերի, թ. 2190։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ցխինվալի գիւղի Վարչութեան Նորին Սրբութեան գոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը՝ յօգուտ գաղթականների ժողոված և Գօրի ուղարկած 150 փ. ալիւրի և 50 փ. լոռու առթիւ։ 5 Դեկտեմբերի, թ. 2194։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լոնդոնից՝ Երևանի Վօլժսկօ-Կամսկի բանկի միջոցով փոխադրած քառասուն չորս հազար հինգ հարիւր յիսուն (44,550) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 8 Դեկտեմբերի, թ. 2211։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Զարլսթաունի Հայ Տիկնանց Որբանոցամ Ընկերութեան փոխադրած հինգ հարիւր եօթանասուն և մի ռուբ. 45 կ. (571 ռ. 45 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 8 Դեկտեմբերի, թ. 2212։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Սան-Ֆրանչեսկոյի Ցանձնաժողովի փոխադրած չորս հազար (4000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան՝ յատկացնելով այդ գումարից 1325 ռուբ. յօգուտ կամաւորների, իսկ մնացած 2675 ռուբ. յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 Դեկտեմբերի, թ. 2214։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Հայոց Առաջնորդի փոխադրած երկու հարիւր եօթանասուն ինն ռուբ. 48 կ. (27 ռ. 489 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 Դեկտեմբերի, թ. 2216։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին աւելացնել այրի Թագուհի Տէր-Մարտիրոսեանի նպաստը տարեկան քսան և չորս (24) ռուբլիով։ 11 Դեկտեմբերի, թ. 2318։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին տալ Դպրոցական Դրամագլխի տոկոսներից նպաստ Երևանի թեմի

1) Զիթիհանքով գիւղի ծխական դպրոցին—100 ռ., 2) Բողազքեասանի—100ռ., 3) Իմրխանի—150 ռուբլի, 4) Բուղդաշէնի—150 ռ., 5) Համզաչիմանի—200 ռ., 6) Արթիկի և Մեծ-Արխվալիի 200-ական ռուբ. (միայն այս տարի), 7) Մօլլա-Բայազիտի—200ռուբ., 8) Զօլա-Խաչի—150 ռ., 9) Ներքին-Ագիամանի—150 ռ., 10) Քեօլաղռանի—100 ռ., 11) Ղուլալիի—150 ռ., 12) Քարվանսարայի—150 ռ., 13) Մալևի—200 ռ., 14) Շինաթաղի—200 ռ., 15) Թազա-Գիւղի—200 ռ., և 16) Լորի—200 ռ., ընդամենը—2800 ռուբլի։ 15 Դեկտեմբերի, թ. 2324։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Խաչ քաղաքի Նիկողայոս քահանայ Ճուղուրեանի փոխադրած մի հարիւր յիսուն (150) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2329։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայի Հայոց Հոգևոր Կառավարութեան փոխադրած հինգ ռուբ. 63 կ. (5 ռ. 63 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 Դեկտեմբերի, թ. 2330։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ղարսի Արսէն քահանայ Տէր-Գրիգորեանի փոխադրած վաթսուն և մի ռուբ. 40 կ. (61 ռ. 40 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների և անդոր-

բաղիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2331։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Դերբենդի Աբրահամ աւագ քահանայ Սպանդունու փոխադրած երեսուն (30) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2332։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրովսկի փոխատու-խնայողական Ընկերութեան փոխադրած հինգ (5) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2333։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մոսկուայից Լէօն Լիւքսի փոխադրած հինգ (5) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2334։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բախչիսարայի Հայոց Ցանձնախմբի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2335։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից Բոյեաճեան Եղբ. երկու փոխադրական տոմսով ուղարկած վեց հազար երկու հարիւր տասն և վեց ռուբ. 20 կ. (6216 ռ. 20կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 12 Դեկտեմբերի, թ.2336, 2337։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիկոլայ Պօղոսեանի (Բօղոսեան) երեք փոխադրական տոմսերով ուղարկած չորս հարիւր իննսուն ինն ռուբ. 43 կ. (499 ռ. 43 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկա-

նելոյն։ 12 Դեկտեմբերի, թ. 2338, 2339, 2340։

Դիւանի մակագրութեամբ, համաձայն Նորին Սրբութեան հրամանի, յանձնարարուեց Տփխիսի Հայոց Կենտրոնական Յանձնաժողովին հոգ տանել Վանից տեղափոխուելիք հարիւր գաղթական որբերի համար, որի մասին հեռագրել է Ջուլֆայից պ. Սիրական Տիգրանեանը։ 12 Դեկտեմբերի, թ. 2344։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Կովկասի Հ. Բ. Ընկերութեան Գօրու ճիւղի վարչութեան փոխադրած երկու հարիւր քսան և մի ռուբ. 07 կ. (221 ռ. 07 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 Դեկտեմբերի, թ. 2347։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Շուշու Ռէալական Դպրոցի աշակերտական Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին (կրօնուսոյց Տ. Եղիշէ քահ. Թարխանեանի միջոցով) Նորին Սրբութեան գոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը՝ յօգուտ գաղթականների ուղարկած մի հարիւր յիսուն (150) ռուբլու համար։ 14 Դեկտեմբերի, թ. 2350։

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով յայտնելով Մայր Աթոռի միաբան Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանի Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի նախագահ կարգուելը, համաձայն նոյն թեմի Առաջնորդի միջնորդութեան, առաջադրուեց կարգադրել նորա ռոճկի և ճանապարհածախսի մասին։ 14 Դեկտեմբերի, թ. 2351։

Կոնդակ Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունու անունով, որով յանձնարարուեց յայտնել Ամերիկաբնակ բոլոր հայերին, որ այսուհետև գաղթականների և կամաւորների օգտին գումարները փոխադրեն Նորին Վեհափառութեան անունով միայն առաջնորդարանի միջոցով, նախօրօք ամերիկական

գումարը վերածելով ռուսական ռուբլու, որպէսզի շփոթութիւն ու թիւրիմացութիւն առաջ չգայ դրամական հաշիւների մէջ: 14 Դեկտեմբերի, թ. 2354:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնարարուեց Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին փոխադրել Վանայ նահանգապետ պ. Տերմէնի անունով յօգուտ Վասպուրականում մեռցած գաղթականների, չորս հազար (4000) ռուբլի: 17 Դեկտեմբերի, թ. 2356:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինօդին կատարել տալ բոլոր ձեռակերպութիւնները՝ հանգուցեալ Գէորգ Միրզաբեկեանցի արած նուիրաբերութիւնները յօգուտ Շամախու Հայոց թեմական Դպրանոցի և Նորշէնի եկեղեցու անուններով հաստատելու և հետևանքի մասին զեկուցանել Նորին Ս. Օծութեան՝ հանգուցեալի ժառանգներին օրհնութեան կոնդակ ուղարկելու համար: 17 Դեկտեմբերի, թ. 2360:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Աստագէից (Ֆերգանեան շրջ.) Սոֆիա Ունանեանի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2373:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ամերիկայի Ֆաուլերի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան հինգ հարիւր եօթանասուն և մի ռուբ. 43 կ. (571 ռ. 43 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2374:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Ամերիկայի Հայոց Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետի փոխադրած երկու հազար ինն հարիւր յիսուն վեց (2956) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2375:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի «Խարբերդի Կարմիր գիւղի Լուսաւորչական Ուսումն. Ընկերութեան» փոխադրած ութ հարիւր ութսուն հինգ (885) ռուբլին, պատուիրելով մուտք գրել այդ գումարի $^1/_3$ մասը յօգուտ գաղթականների, իսկ $^2/_3$-ը յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2376:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ֆրեզնօ քաղաքից Բարսեղ Տէր-Մարտիրոսեանի փոխադրած մի հարիւր քառասուն եօթ (147) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2377:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ֆեմբրիջ քաղաքի Հայ Կանանց Դպրոցասէր Ընկերութեան փոխադրած երեք հարիւր վաթսուն (360) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2378:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ղարսի Փոխանորդի միջոցով Օրթաքիլիսեցի Աւետիս Ռշտունեանի փոխադրած երեսուն (30) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2379:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գրոզնայի Հայոց Բարեգործական Ընկերութեան փոխադրած հինգ հարիւր յիսուն (550) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 Դեկտեմբերի, թ. 2380:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքից «Վասպուրականի Հայոց Յանձնախմբի» փոխադրած մի հազար հինգ հարիւր վաթսուն և եօթ

(1567) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 17 Դեկտեմբերի, թ. 2381։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Զրաբերդի Ա. մասի գործակալի Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով փոխադրած քառասուն վեց (46) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 17 Դեկտեմբերի, թ. 2382։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին Դահիրէի «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան» 1915 թ. օգոստոսին փոխադրած մի հազար հինգ հարիւր (1500) ռուբլին, պատուիրելով յատկացնել Վանի Վարժապետանոցի ուսուցիչներին և փոխադրել Տփխիս «Մշակ» լրագրի խմբագիր պ. Համբարձում Աղաբեկեանին՝ յանձնելու յիշեալ Վարժապետանոցի ուսուցիչներին, համաձայն միութեան այս տարուայ հոկտեմբերի 29-ի, թ. 6840 գրաւոր միջնորդութեան։ 18 Դեկտեմբերի, թ. 2386։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բագրատ եպիսկոպոսի դեկտեմբեր 17-ի յայտարարութեամբ ներկայացրած երկու հարիւր (200) ռուբլին, որ ստացուած է Երևանի Նահանգապետի միջոցով, Խարկովի Հայոց աղօթատան Սրապիոն քահանայ Սամուէլեանից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Երևանի Նահանգապետին։ 18 Դեկտեմբերի, թ. 2389։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Учетно-Ссуд. Банкъ Персіи Бакинское А-во»ի փոխադրած (Թեհրանի Ռուսաց միսսիայի միջոցով ստացուած) ինն հարիւր եօթանասուն վեց ռուբ. 35 կոպ. (976 ռ. 35 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 Դեկտեմբեր, թ. 2390։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Դալացայից Պօղոս Ակրայեանի Ռուս Ասիական բանկի Օդեսսայի բաժնի միջոցով փոխադրած հինգ հարիւր իննսուն ութ (598) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 19 Դեկտեմբերի, թ. 2394։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսաբարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին շնորհել Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անդամ Սարգիս աւագ քահանայ Շիրոյեանին Ս. Միւռոն՝ Վրաստանի Հայոց թեմի գործածութեան համար։ 21 Դեկտեմբերի, թ. 2397։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին՝ Դէօրգիևսկիի Ներսէս քահանայ Վարդանեանի փոխադրած սի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 21 Դեկտեմբերի, թ. 2399։

Դիւանի գրութիւն Տ. Դիւտ աւագ քահանայ Աղայեանի անունով, որով յայտնուեց Նորին Վեհափառութեան գոհունակութիւնն ու օրհնութիւնն ուղարկած «Դիւան Հայոց պատմութեան» ԺԳ. հատոր գրքի համար։ 22 Դեկտեմբերի, թ. 2408։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Նպաստ Դպրոցական դրամագլխի տոկոսներից Գանձակի վիճակի Փիր և Դաւնակեր գիւղերի Հայոց ծխական դպրոցներին, մի տարով այնէ 1915/16 ուսումնական տարուայ համար—100—ական ռուբլի։ 22 Դեկտեմբերի, թ. 2411։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Նպաստ Դպրոցական դրամագլխի տոկոսներից Աշիալա գիւղի (Վրաստանի թեմ) Հայոց ծխական դպրոցին տարեկան 150 ռուբլի։ 22 Դեկտեմբերի, թ. 2410։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան տպագրել Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանի «Հաւաքարան անուանց Կաթուղիկոսաց» աշխատութիւնը ըստ ներկայացրած նախահաշուի, տպագրելով 300 օրինակ, մի հարիւր օրինակ տալ Տ. Մեսրոպ վարդապետին, իսկ մնացեալը պահել յօգուտ Մայր Աթոռի։ 22 Դեկտեմբերի, թ. 2420։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Սինոդի Ծառայողների նուիրաբերած ութը ռուբ. 35 կ. (8 ռ. 35 կ.), որը բարձուած է նոցա դեկտեմբեր ամսուայ ռոճկագրամներից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 Դեկտեմբերի, թ. 2421։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Եսայի Ջանփոլադեանի անունով Վայոց-Ձորի Ս. Խաչ վանքի կտուրն և ուխտաւորների սենեակներն իւր ծախքով նորոգելու առթիւ։ 24 Դեկտեմբերի, թ.2423։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Հայրապետ Մատուրեանի անունով Վայոց-Ձորի Ս. Խաչ վանքի համար ջրի խողովակներ դնելու և իւր ծախքով վանքի աղբիւրից ջուրը վանքը հասցնելու համար։ 24 Դեկտեմբերի, թ. 2424։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Սերգէյ Խվոստովի փոխադրած երեք (3) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 Դեկտեմբերի, թ. 2433։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ն. Խ. Խուրեանի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով այդ գումարից (50) ռուբլին մուծել մատեան յօգուտ գաղթականների, իսկ մնացած յի-

սուն (50) ռուբլին յօգուտ Մայր Աթոռի և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 Դեկտեմբերի, թ. 2434։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցով Տփխիսի Հայոց Կենտրոնական Կոմիտէի յօգուտ որբերի փոխադրած վեց հազար (6000) ռուբլին և Խարկովի Սրապիոն քահանայ Սամուէլեանի փոխադրած յօգուտ գաղթականների չորս հարիւր (400) ռուբ., ընդամենը վեց հազար չորս հարիւր (6400) ռուբլի, պատուիրելով մատեան մուծել և համապատասխան անդորրագրերն ուղարկել ըստ պատկանելեաց։ 25 Դեկտեմբերի, թ. 2435։

Նորին Սրբութեան կոնդակով հաստատուեց Եալթա քաղաքի Հայոց Ցանձնաժողովի հետևեալ կազմը՝ Պատուաւոր Նախագահ Տ. Գաբրիէլ քահանայ Տուրփայեան, Նախագահ պ. Նիկողայոս Ստեփանեան, Փոխ-Նախագահ պ. Խաչատուր Օհանեան, Գանձապահ պ. Ստեփաննոս Նախշունեան, Փոխանորդ գանձապահի պ. Յովհաննէս Աբրահամեան, անդամներ՝ պ. պ. Յովհաննէս Պոպովեան, Դիոնէսիոս Յովակիմեան, Մկրտիչ Ազնաւուրեան, Ադամ Մարտիրոսեան, Սարգիս Գաբրիէլեան, Աւետիք Ցարութիւնեան, Սիմէօն Բարէեան, Գաբրիէլ Գաբօյեան, Միքայէլ Աստուածատրեան, Սարգիս Վայրատեան, Միսակ Մանուկեան, Յովհաննէս Գալստեան, Յովհաննէս Ցարութիւնեան, Կարապետ Մերգելեան, Իգնատիոս Զաքարեան, Սահակ Թամամեան, Կարապետ Պետրոսեան, Արշակ Խալաթեան, Սարգիս Ցակոբեան և հաշուետեսներ՝ պ. պ. Յովակիմ Սարիբէգեան, Եղիա Զուքէլէկեան, և Օգոստինոս Կայթմազեանց։ Յայտնուեց Ցանձնաժողովի բոլոր անդամներին Հայրապետական օրհնութիւն, որպէսզի աւելի եռանդուն գործունէութիւն ցոյց տան թշուառ Տաճկահայ գաղթականներին խնամելու և օգնութիւն հասցնելու գործում։ 25 Դեկտեմբերի, թ. 2436։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոգին Խոյթայի Գրիգորիս քահանայ Գարաքեհեանի փոխադրած տասն (10) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 Դեկտեմբերի, թ. 2438։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Խոյթայի Հայկական Կոմիտէի փոխադրած ութ ռ. 75 կ. (8 ռ. 25 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 Դեկտեմբերի, թ. 2439։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Սուչի քաղաքից փոխադրած իննսուն և երկու (92) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 Դեկտեմբերի, թ. 2440։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոգին գաղթականների գումարից յիսուն հազար (50,000) ռուբլու վարկ բանալ յանուն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի։ 29 Դեկտեմբերի, թ. 2457, 2458։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Լուգանսկից «Պոպովեանի Առևտրական տան» ծառայողների փոխադրած երկու հարիւր (200) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 30 Դեկտեմբերի, թ. 2466։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոգին Ամերիկայի Կալիֆորնիայի Ֆաուլրը քաղաքից Պետրոգրադի միջազգային դրամատան միջոցով փոխադրած չորս հազար իննսուն երկու ռուբ. 75 կ. (4092 ռ. 75 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 30 Դեկտեմբերի, թ. 2467։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոգին Տագանրոգի Յովհաննէս քահանայ Օգսենտեանի փոխադրած երկու հարիւր իններսուն և ինն ռուբ. 20 կ. (299 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 30 Դեկտեմբերի, թ. 2468։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լոնդոնից գնդապետ Գրիգորիի փոխադրած քսան և չորս հազար երեք հարիւր քսան (24320) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 Յունուարի, թ. 2։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ալպարանի և Աշտարակի շրջանների գործակալ Տ. Աբել քահանայի հանգանակած մի հարիւր երեք (103) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 Յունուարի, թ. 3։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լոնդոնից Յակոբեանի փոխադրած երեսուն և մի հազար վեց հարիւր յիսուն (31650) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների, կամաւորների, որբերի և այլն և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Յունուարի, թ. 5։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լուգանսկից պ. Պետրոս Մանուշակեանի փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Յունուարի, թ. 6։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Գրանդ Ռապիդս քաղաքի Հ. Յանձնախմբի մի հարիւր երեսուն և ինն (139) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 2 Յունուարի, թ. 7։

1273-54

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Բոստոն քաղաքի Ցանձնախմբի փոխադրած եօթ հարիւր ութ (708) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 2 Յունուարի, թ. 8:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Պինկհամտոն քաղաքից Մելիտոս Մելիտոսեանի փոխադրած վեց հարիւր վաթսուն հինգ (665) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 2 Յունուարի, թ. 9:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին տալ Ապարանի և Աշտարակի շրջանի գործակալ Տ. Աբել քահանային Մողնու ս. Գէորգ վանքի, ինչպէս և Ղարզավանքի և Տամջլու գիւղի եկեղեցիների համար մի-մի ձեռք հնոտի եկեղեցական զգեստ: 2 Յունուարի, թ. 10:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսին Ազգային Բիւրոյի ուղարկած հայ կամաւորների այբբենի մի օրինակը՝ մատենադարանում պահելու համար: 4 Յունուարի, թ. 13:

Գրութիւն Դիւանի Տ. Գարեգին վարդապետի անունով, որով յայտնուեց, որ Նորին ս. Օծութեան կարգադրութեամբ կարգուած է Հայրապետական Դիւանի խորհրդի անդամ: 4 Յունուարի, թ. 25:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աստրախանի թեմի Խրիստոֆորովո գիւղի Սարգիս քահանայ Յակոբեանի փոխադրած քառասուն երեք ռուբ. 51 կոպ. (43 ռ. 51 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ որբերի և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 4 Յունուարի, թ. 26:

Գրութիւն Դիւանի Ս. Էջմիածնի Եղբայրական Օգ-

նութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի անունով, որով յանձնարարուեց՝ Նորին Ս. Օծութեան կարգադրութեան համաձայն, փոխադրել Թիֆլիս պ. Տիգրան Նազարեանի որբերի ապաստարանի օգտին գաղթականական գումարից մի հազար (1000) ռուբլի։ 7 Յունուարի, թ. 30։

Նորին Սրբութեան մակագրութեամբ՝ յանձնուեց Սինոդին Տ. Հմայեակ վարդապետի միջոցով Մոսկուայից Դասպարեանի փոխադրած 10 ռուբ. և Էջմիածնի գաւառապետի միջոցով 28 ռուբ. 05 կ., ընդամենը երեսուն ութ ռուբ. 05 կ. (38 ռ. 05 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելեաց։ 8 Յունուարի, թ. 31։

Կոնդակ Սինոդի անունով, որով պատուիրուեց, Վրաստանի Առաջնորդի խնդրի համաձայն, Դեղարդի միաբան Տ. Երուանդ վարդապետին կարգել Ախալքալակի գործակալ և կարճել առաջիկայ փետրուարի 1-ից Նորա ռոճիկն ու աննդադրամը։ 9 Յունուարի, թ. 38։

Կոնդակ Սինոդի անունով, որով պատուիրուեց տալ ցառանձին տնօրէնութիւն Տ. Ղևոնդ վարդապետ Մարդուկէսեանին, որպէս անպաշտօն վարդապետի, միաբանական ռոճիկ և աննդադրամ։ 11 Յունուարի, թ. 43։

Կոնդակ Սինոդի անունով, որով պատուիրուեց տալ Վարդան վարդապետ Թումայեանին, որպէս անպաշտօն վարդապետի, միաբանական ռոճիկ և աննդադրամ ցառանձին տնօրէնութիւն։ 11 Յունուարի, թ. 65։

Կոնդակ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց տալ նախկին Ղևոնդ աբեղայ Մարդուկէսեանին վարդապետական աստիճան, ի նկատի ունենալով նորա մեղայականը և Ամերիկահայ ժողովրդի բազմադիմի միջնորդութիւնները։ 11 Յունուարի, թ. 44։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Դպրոցական դրամագլխի տոկոսներից նպաստ Երևանի թեմի Մազրա գիւղի դպրոցին տարեկան երկու հարիւր (200) ռուբլի։ 11 Յունուարի. թ. 45։

Կոնդակ յանուն Ամերիկայի Հայոց Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունու, որով նկարագրելով Կովկաս գաղթած Ցանկահայերի տնտեսական վիճակը՝ յանձնարարուեց յորդորել Ամերիկահայերին շարունակել առատ նուիրաբերութեամբ օժանդակել գաղթականներին։ 11 յունուարի թ. 49։

Դիւանի գրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին Ռումինիայի Սիլիստրիա քաղաքի հայերի, յօգուտ գաղթականների, ուղարկած երեք արկղ իրերի գրութիւնն ու ցուցակը, պատուիրելով ստանալ իրերը և շնորհակալութիւն յայտնել նուիրատուներին։ 11 յունուարի, թ. 56։

Դիւանի գրութիւն Գանձակի Փոխանորդի անունով, որով յայտնուեց, որ Նորին Սրբութիւնը բարեհաճեց առնել Իւր բարձր հովանաւորութեան տակ Գանձակի Հայոց Աղքատախնամ Ընկերութիւնը։ 11 յունուարի, թ. 59։

Կոնդակ յանուն Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի, որով պատուիրուեց վարդապետական աստիճան տալ Լոռու գաւառի Ճահնազար գիւղի հայ-կաթոլիկ Հ. Վարդան Թումայեանին։ 12 յունուարի, թ. 67։

Կոնդակ Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունու անունով, որով յայտնելով նախկին Ղևոնդ վարդապետ Մարդուկէսեանին վարդապետական կոչումը վերադարձնելու մասին, յանձնարարուեց տեղեկացնել այդ մասին Ամերիկահայ ժողովրդին, որպէս զի յուզուած մաքերը խաղաղուին։ 12 յունուարի, թ. 69։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին կարգադրել յանձնել Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովին վանքի անտառում գտնուած շերամատունը, ուր գաղթականների համար Ցանձնաժողովը բանալու է արհեստանոց-ջուլհականոց։ 13 յունուարի, թ. 81։

Նորին Սրբութեան մակագրութեամբ հաստատելով Աստրախանի Ծխականների ժողովի 1915 թ. նոյեմբերի

29-ի վճռի 3-րդ կէտը, պատուիրուեց Աստրախանի Կոնսիստորիային տալ տեղի օրիորդաց դպրոցների միջոցներից միանուագ նպաստ հանգուցեալ ուսուցիչ Խաչատուր Յարութիւնեան Ղամարեանցի ընտանիքին երեք հարիւր վաթսուն (360) ռուբլի մի տարուայ ընթացքում։ 14 յունուարի, թ. 89։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրովսկի Փոխատու Խնայողական Ընկերութեան Նախագահ պ. Աղէքսանդր Խուդաղեանի փոխադրած հինգ (5) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 յունուարի, թ. 98։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Յորքից Սարգիս Թիւփէնքչեանի և Կարապետ Իսկիեանի փոխադրած երկու հարիւր ութսուն և չորս ռուբ. 10 կ. (284 ռ. 10 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 յունուարի, թ. 99։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տ. Բագրատ եպիսկոպոսի միջոցով ստացուած Փարիզի Հայոց եկեղեցուց հինգ հարիւր քսան և երկու (522) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 յունուարի, թ. 100։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մեղրի գիւղի Հայոց Յանձնաժողովի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 15 յունուարի, թ. 101։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Հորիզոն» լրագրի խմբագրութեան միջոցով ստացուած Նովոչերկասկիից պ. Ղուկաս Շահպազեանից յօգուտ գաղթականների 48 ռուբլի 50 կոպ. և Սուխումից պ. Համբարձում Տատեանից յօգուտ որբերի 94 ռուբ. 50 կ.,

ընդամենը մի հարիւր քառասուն և երեք (143) ռուբլի, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելեաց։ 15 յունուարի, թ. 102։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց կարգադրել, որ այսուհետև շարունակուի տալ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու կալուածական արդիւնքից նպաստ Ախալքալակի, Սուլտայի, Կարզախի և Դադէշի հայոց ծխական դպրոցներին։ 15 յունուարի, թ. 105։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բեսսարաբիայի թեմի Մելիտոպոլ քաղաքի Ցանձնախմբի նախագահ Վահան քահանայ Մամիկոնեանի փոխադրած մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 յունուարի, թ. 111։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մ. Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին շնորհել Նոր-Բայազէտի գործակալ Ռուբէն վարդապետին Ս. Միւռոն՝ շրջանի եկեղեցիների համար։ 18 յունուարի, թ. 113։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Չիքագօ քաղաքից եղբ. Պուսիմանի փոխադրած մի հազար երկու հարիւր (1200) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 յունուարի, թ. 124։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բեսսարաբիայի թեմի Իսմայիլ քաղաքի Ցակով քահանայ Պեօրեկճեանի փոխադրած տասն և երկու (12) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 յունուարի, թ. 125։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոդին «Մոսկուայի Լազարեան ճեմարանի նախկին աշակերտների վարչութեան» փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ որբերի և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 յունուարի, թ. 126։

Դիւանի գրութիւն յանուն Մայր Աթոռի Գ. Հոգևոր ճեմարանի Վարչութեան, որով յայտնուեց, որ Նորին Ս. Օծութիւնն ի նկատի առնելով բժշկական խորհրդի եզրակացութիւնը և ճեմարանի Վարչութեան որոշումը՝ կարգադրեց 1915/16 ուսում. տարում չբանալ ճեմարանը։ 18 յունուարի, թ. 127։

Նորին Սրբութեան մակագրութեամբ Տ. Տիրայր վարդապետը ժամանակաւորապէս, ցառանձին տնօրէնութիւն, կարգուեց Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի խմբագիր։ 18 յունուարի, թ. 130։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադի Միջազգային Դրամատան միջոցով Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքից փոխադրուած մի հազար վեց հարիւր տասն և երեք ռուբ. 66 կ. (1613 ռ. 66 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 19 յունուարի, թ. 135։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած երկու հարիւր քառասուն (240) ռուբլին, որ գոյացել է ալիւրի վաճառումից, պատուիրելով մուտք գրել մտից մատեանում յօգուտ գաղթականների։ 19 յունուարի, թ. 136։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի կողմից ներկայացրած ա) բժ. Էյիլերի ձեռքով հանգանակուած 35 ռ. 50 կոպէկ և բ) ալիւրի վաճառումից գոյացած 140 ռուբլին, ընդամենը մի հարիւր եօթա-

նասուն և հինգ ռուբլի 50 կ. (175 ռ. 50 կ.) պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագրերն ուղարկել ըստ պատկանելեաց։ 19 յունուարի, թ. 137։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոզին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի ներկայացրած երեք հարիւր եօթանասուն ութ (378) ռուբլին, որ գոյացել է ալիւրի վաճառումից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Յանձնաժողովին։ 19 յունուարի, թ. 138։

Դիւանի շրջաբերական գրութիւններ Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդների անունով, որոնց յանձնարարուեց շրջաբերական հրամաններով պատուիրել իրենց ստորադրեալ բոլոր քահանաներին, որ չպակեն բնիկ Էրզրումցի Արամ Պետրոսեանին (կամ Աբրահամ Տէր Պետրոսեանին), քանի որ երեք անգամ (Ֆրեզնօ, Ռուսճուկ և Տփխիս) պակուել է և ամեն տեղ լքել իւր կանանց ու անհետ կորել։ 20 յունուարի, թ. 145—149։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոզին Շուշու Խորէն քահանայ Իսկեանդարեանի փոխադրած քսան և հինգ (25) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 21 յունուարի, թ. 155։

Դիւանի գրութեամբ խնդրուեց Վանայ շրջանապետ պ. Տերմէին խիստ միջոցներ ձեռք առնել գտնելու Կտուց անապատից գողացուած եկեղեցական զանազան հնութիւնները և յանձնելու վանահօրը։ 22 յունուարի, թ. 170։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, կարգադրել վճարել Թիֆլիզի Հայ քահանաների ապահովութեան գանձարանից նպաստ, քահանաների ստացածի

չափով, Միքայել և Տիգրան սարկաւագներին։ 22 յունուարի, թ. 171։

Դիւանի գրութիւն Վանայ Միլիցիայի Պետ պ. Արմենակ Եկարեանի անունով, որով խնդրուեց աշխատել գտնել Կտուց անապատից գողացուած եկեղեցական հնութիւնները և յանձնել վանահօրը։ 22 յունուարի, թ. 173։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տուապսէից Յովհաննէս Մումջեանի և այլոց փոխադրած ինն (9) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունուարի, թ. 175։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տուապսէից Վրթանէս Մուշլեանի փոխադրած երեք ռուբ. 20 կ. (3 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունուարի, թ. 176։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած ալիւրի վաճառումից գոյացած 576 ռուբ. 35 կ. և Սինոդի ծառայողների յունուար ամսուայ ռոճիկներից վերցուած 8 ռ. 39 կ., ընդամենը հինգ հարիւր ութսուն չորս ռուբ. 74 կ. (584 ռ. 74 կ.), պատուիրելով մուծել մտից մատեան յօգուտ գաղթականների։ 22 յունուարի, թ. 178։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի ներկայացրած ալիւրի վաճառումից գոյացած երկու հարիւր եօթանասուն ինն (279) ռուբ., պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունուարի, թ. 179։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի ներկայացրած ալիւրի վաճա-

ռումից գոյացած երկու հարիւր վաթսուն և չորս (264) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Ցանձնաժողովին։ 23 յունուարի, թ. 183։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Պրէնթֆորտ քաղաքի «ոչ-կուսակցական Ցանձնախմբի» փոխադրած մի հազար իննսուն վեց (1096) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան՝ կէսը յօգուտ հայ կամաւորների, իսկ մնացած կէսը յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 23 յունուարի, թ. 184։

Կոնդակ Երվինանց գիւղացի պ. Գասպար Տէր Մարգարեանի անունով, որով, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան միջնորդութեան համաձայն, կարգուեց նոյն գիւղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի պատուաւոր հոգաբարձու՝ յիշեալ գիւղի դպրոցն իւր ծախքով կառուցած լինելու և իւրաքանչիւր տարի նիւթական օգնութիւն ցոյց տալու համար։ 25 յունուարի, թ. 187։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի փոխթեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին՝ թեմի վանքերից մէկում ապրելու տեղ տալ Աղթամարի միաբան Գաբրիէլ ա. սարկաւագ Մանուկեանին։ 25 յունուարի, թ. 191։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի ներկայացրած հինգ հարիւր տասն (510) ռուբլին, գոյացած ալիւրի վաճառումից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել Ցանձնաժողովին։ 25 յունուարի, թ. 192։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Ցուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով, Նորին Սրբութեան կարգադրութեան համաձայն, յանձնարարուեց ստանալ և պահել մատենադարանում Վանայ, Լիմ անա-

պատի և շրջակայ հայոց վանքերի ու եկեղեցիների, թուով 1099 հատ, ձեռագրերը։ 27 յունուարի, թ. 200։

Դիւանի գրութիւն Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց, որ Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեց թոյլատրել թաղել գնդապետ Միքայէլ Սահակեանի դին Գօրի քաղաքի «Ամենայն Սրբոց» եկեղեցու բակում, ստանալով հանգուցեալի խոստացած 500 ռուբ. նուիրաբերութիւնը յօգուտ Գօրու հայոց դպրոցին։ 28 յունուարի, թ. 202։

Դիւանի գրութիւն Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի անունով, որով առաջադրուեց տալ մի հարիւր ռուբլի նպաստ Աղէքսանդրապոլի գաւառի Նորաշէն գիւղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցին, ուր կրթւում են գաղթական որբեր եւ։ 28 յունուարի, թ. 203։

Դիւանի գրութիւն Լօզանում ուսանող Տ. Արէլ արեղայի անունով, որով յանձնարարուեց, համաձայն Նորին Սրբութեան կարգադրութեան, ըստ ցանկութեան Ժընեւի հայ գաղութի, Ս. պատարագ մատուցանել՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցու ծիսով Ժընեւում, յորդորել ունենալ աղօթատուն սովորական ժամերգութեան համար և կենդանի խօսքով վառ պահել Ժընեւի հայերի սրտում սէր դէպի հայրենի եկեղեցին ու սրբութիւնները։ 28 յունուարի, թ. 211։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան 1915 թ. դեկտեմբերի 29-ի, № 2448, մակագրութիւնը, nrncեց. համաձայն Վեհափառ Հայրապետի մակագրութեան պատուիրել Մայր Աթոռի գանձապահին յիսուն հազար (50000) ռուբլու վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով։ 11 յունուարի, թ. 2։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան 1915 թ. դեկտեմբ.